ՆՈՐ-ԴԱՐ

№ 94 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի 15 Յունիսի 1888 Շորեքշաբթի 15 Յունիսի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 94

Տարեկան 10 րուբլի, վեց ամսոք՝ 6 րուբլի, երեք ամսոք՝ 3 ր. 50 կ., ամսոք՝ 1 ր. 50 կ., հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրատան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գնէն 2 կ., բնկալների հաշիւ կրկնապատկի։

«Նոր-Դար»-ին առաջիկայ յուլիսի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 6 ր.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։ Մատենախօսական։ Ակնարկ։ Խօրասան։
Թղթակցութիւններ.—Գեօրիս։ Մերվ։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՇՈՒՇԻԻՑ.—Թեմական դպրոցի քննութիւնները արդէն վերջացան և յունիսի 3-ին կայացաւ ակտ։ Օրիորդական դպրոցի ակտն էլ կատարուելու է յունիսի 12-ին։ Ուսումնարաններում, պէտք է խոստովանուել, բաւական առաջադիմութեան քայլեր են նկատվում, այնպէս որ, եթէ սրն անցեալ ուսումնական տարուայ ուսուցչական խումբը մնայու լինի, կարող ենք յոյս ունենալ, որ վերջապէս մեր ուսումնարանները կարող կը լինին իրենց նպատակները ծառայել։ Սակայն աւելի քան կասկածելի է, որ ուսուցչական խումբը մնայ իր պաշտօնում՝—ինչպէս լսվում է, մտադրութիւն կայ նրանց ռոճիկները պակասեցնելու, որպէս զի տնտեսութիւն արած լինին։ Մենք կարծում ենք, որ տնտեսականութեան ամենալնասակաբը և աննպատակայարմարն այն է, երբ անհրաժեշտ միջոցներից է լինում այդ տնտեսութիւնը.... Փոխանակ ուսուցիչներին որպէս խրախոյս աւելացնելու նրանց ռոճիկը, մենք նուազեցնում ենք։ Հաւանականն այն է, որ մեր ներկայ ուսուցչական խմբի անդամներից շատերը կը հեռանան իրենց պաշտօնից, որովհետև նրանք արժան, բարեխիղճ և իրենց կոչման համապատասխան ուսուցիչներ են, որ ամեն տեղ էլ կը կարողանան աւելի չարմար պաշտօններ գտնել.... Մեր նպատակը պէտք է լինի ոչ թէ մեր ունեցածը ձեռքից փախցնել, հապա նրանց աւելի ևս տաքացնել և կապել գործի հետ։

Մեր ուսումնարանների բիւջէն, առանց այն էլ խիստ սահմանափակ էր, իսկ ինչ կը լինի այդ ուսումնարանի դրութիւնը, եթէ նրա բիւջէն աւելի նուազեցնենք։ Ո՛չ ենք գնում։

—

Խօսում են անտառների ունեցած կենսական նշանակութեան մասին երկրի թէ տնտեսական և թէ առողջական դրութեան բարւոքման մասին, բայց չեն աշխատում այնպէս անել, որ եթէ նոր անտառներ չանկուին էլ, հներըը չ'ոչնչանան։ Ինչպէս յայտնի է, Պաղկազարդին սովորութիւն է ինչպէս տները, նոյնպէս և դուքանները զարդարել կանաչ տերևներով, մասդաղ ծառերով և խոտերով։ Որովհետև այդ պատճառով անտառների ամենակարևոր մասը, փոքրիկ ծառերն ու ծառերի գեղեցիկ տերևները կոտրում են ծախելու համար, ուստի անտառները մեծապէս վնասվում են՝ վնասելով և երկրին։ Ադ բանն աչքի առաջ ունենալով, անցեալ տարիներըը Մինչին Ռուսիայի համար եղել էր կարգադրութիւն, որով արգիլվում էր այդպիսի ծառեր կոտորելը և կոտրողը ենթարկվում էր խիստ պատժի։ Բայց, ինչպէս երևում է, այդ կարգադրութիւնը միայն Մինչին Ռուսիայի համար է եղել։ Յանկալի էր, որ այդ կարգադրութիւնը գործադրուէր և մեզանում, որպէս զի մեր անտառներն ազատ մնային Ռուսիայի անտառների վիճակին ենթարկուելու վտանգից։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ.—Յունիսի 8-ին Ճաշից յետոյ, ժամը 6-ին սկսեց երկինքը մթնել, ամպերը սարսափելի Ճայթիւններով որոտալ և աղաղակու ձուլի մեծութեամբ անձրևահառն կարկուտ գալ, որ ուղիղ կէս ժամ տևեց. կարծես կուժերով էին երկնքից թափվում, այնպէս որ կատարեալ չըհղեղի էր նմանում, բոլորն էլ յուսահատուել էին. մօտակայ անտառներից չըերը սկսեցին արագութեամբ թափուել. բոլոր տներն ու խանութները լցուեցան չըերով. փչացան կամուրջներ և շատ շինութիւններ. տեղիս փոքր գետը ծովի էր նմանում, տեղական զինուորականներին, հիւանդանոցին մօտաւորապէս 20,000 րուբլի վնաս է տուել. բոլոր պարտէզները, բանջարանոցները և արտերը ոչնչացան, փչացան և մնացին աւազի տակ։ Երեւակայեցէք, թէ ինչ կը լինի խեղճ երկրագործ ժողովրդի դրութիւնը. ամբողջ տարին տանջուել, չարչարուել է, յոյսը դրել է իր միակ ցորենի արտի վրայ... և յանկարծ կարկուտը կէս ժամուայ մէջ բոլորը տակն ու վրայ է անում, մնացածն էլ հեղեղն է տանում. այժմս ինչ անէ, Ջեռքը ծոցին, արտասուքը աչքերին պիտի դիմի տեղական վարչաւորներին ծանր տոկոսով փող վեր առնելու, որպէս զի հնար ունենայ իւր, իւր քնտանիքի և իւր անասունների կեանքը պահպանել։ Վերերից ոչ ոք չէ լսում այսպիսի աղետ։ Քարվանսարայից մինչև Դիլիջան արգելունական Ճանապարհը շատ տեղ փչացել է։ Դարսաչայից դէպի Քարվանսարա վերստ ու կէսի վրայ Ճանապարհը բոլորովին վնասուել է ջրից։ Մի շարաթ է պօստը չէնք ստանում Թիֆլիսից, երեւևկողները շատ նեղութիւնների են հանդիպում, օրերով կայարաններում են մնում. շատերը ձի քրէհում՝ այնպէս են գնում։ Ղազախի պ. գաւառապետը ժամանել է տեղս մի քանի կարգադրութիւններ անելու համար։ Մեծապէս ենք, որ պ. գաւառապետի աչալուրջ կարգադրութեամբ անցեալ գարնան տխուր անցքերը չեն կրկնուիլ։

—

Ցեղական ռուս Թերթերը հաղորդում են, որ «Թիֆլիսի Հայաւհեաց Բարեգործական Ընկերութեան» Թոյլ է տրուած Թիֆլիսում առաջիկայ սեպտեմբերից բանալ կար ու Ձևի կանանց ուսումնարան։ Այդ ուսումնարանում պիտի ընդունուին սովորաբար Ծխական ուսումնարաններում աւարտող չքաւոր աղջկերք։

—

ԳԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ.—Անցեալ մայիս ամսի 21-ին ներկայ էինք կայսերական կօնսերվատօրիայում մի շատ հետաքրքիր քննութեան։

Գ. Եկմալեան, որ կօնսերվատօրիայում ուսանում է ահա քանի տարի է, աւարտեց աջողութեամբ երաժշտական կուրսը և ստացաւ դիպլօմ։ Շատ հաղուագիւտ երևոյթ է այդ դէպքը, որ Հայը պարապում է երաժշտութեամբ-երգեցողութեամբ և աւարտում է գեղարուեստի այդ ճիւղի բարձր կուրսը։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ. — Տեղեկանում ենք, որ տեղիս Ծխական դպրոցի քննութիւնները պէտք է սկսուին յունիսի 13-ին և 15-ին վերջանան։ Ցանկալի էր, որ մեր միջի ուսումնարանական գործ հասկացող պարոնները (դժբաղդաբար դրանց Թիւը մեզանում ձեռքի մատների վրայ միայն կարելի է համարել) ներկայ լինէին քննութիւններին, ի մօտոյ գաղափար կազմելու համար մեր նոր սերնդի ուսման մէջ ցոյց տուած առաջադիմութեան մասին։

—Մեզանում յայտնուեցան մարդիկ, որոնք ուզեցան մի այլ վայելուչ ձև տալ հոգևորականների ստանալու արդիւնքին. վՃռուեցաւ Ննդեան և Զատկի տնօրհնէքի և այլ տօնական արարողութիւնների համար փող չտալ հոգևորականներին, այլ տարուայ մէջ տալիքը գրեն մատեանի մէջ և այդ բոլորը ժողովելով միանուագ բաժանեն հոգևորականներին։ Սակաւաթիւ մարդիկ չկամեցան հնթարկուել այդ նոր վՃռին, իսկ բազմութիւնը մատեանի մէջ գրուեցաւ։ Այդ երևակայեալ բարեկարգութիւնը ըստ ինքեան այն օգուտը տուեց, որ մեր հոգևորականները այսօր շատ ապառիկներ ունին, կարծէք սրանք էլ վաճառականներ են։ Իրըև խոստովանք հաղորդեմ «Նոր-Դար»-ին, որ այս նոր կարգադրութեան հեղինակը նոյն իսկ կարգը խանգարելով, Զատկին տուել է իր տալիքը, մատեանը մոռացութեան տալով. սրա մէջ էլ մի «և» կայ։

—

Յունիսի 4-ին կայացած քաղաքային ուսումնարանների յանձնաժողովի նիստում որոշուած են ի միջի այլոց, որ քաղաքային արհեստագիտական կանանց ուսումնարանի դասընթաց աւարտողներին այժմ և եթ տալ աւարտման վկայական՝ առանց սպասելու սեպտեմբերին, իսկ դասարանները փոխադրներին սեպտեմբերին տալ սլաթգիները։ Նոյնպէս որոշուած է Թիֆլիսի արհեստագիտական տղաների ուսումնարանում քննութիւնները նշանակել օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը, իսկ խիստ տաք եղանակներին, ուսումնարանի տեսչին իրաւունք է տրվում աշակերտներին արձակել յուլիսի 15—ից։ Նոյնպէս վերջին ժողովներից մինում որոշուած է, Քաղ. Խորհրդին խնդրամատոյց լինել արհեստագիտական կանանց ուսումնարանում նախապատրաստական դասարանները բանալու մասին։

—

ՂԱՐՍԻՑ.—Այստեղ չարունակ յորդ անձրևներ են տեղում, բայց քաղաքի փողոցները քարոտ լինելուն չնորհիւ՝ այնքան ցեխ չի լինում։—Ուրբաթ օրը տեղայ ընկուզից էլ շատ մեծ կարկուտ, որ կուրատեց բազմաթիւ ապակիները։

—Անցեալները մի հին խան (քարվանսարա) քանդեցին, որպէս զի նոր Ճանապարհ անցկենայ և մնացած տեղերումն էլ նոր խանութներ չինեն։ Մի բանուոր սկսում է խանի մէջ եղած մի հին խանութի պատը քանդել։ Այդ ժամանակ պատի միջից գտնում է մի պուտուկ ոսկի։ Խանի տէրերից մէկի աշակերտը վրայ հասնելով, խլում է բանուորի ձեռից ոսկիները և փախչում ու տանում՝ տալիս է իր տիրոջը։ Տէրը ոսկիները պահում է և յետոյ բաժանում է իր միւս ընկերների հետ (բոլորը Թուով 5 հոգի), 300 րուբլի էլ տալիս են բանուորին։

Հին գարսեցիները պատմում են, թէ մօտ 20 տարի առաջ այդ խանութում նստելիս է եղել մի պարսիկ, մի Թուրք բերում է բաւականի ոսկի և տալիս է պարսկին պահելու, ժամանակ անցնելուց յետոյ, Թուրքը պահանջում է իր ոսկիները. պարսիկը բացատում, յայտնելով, «Թէ Ճշմարիտ է՝ դու ինձ ոսկի տուիր պահելու, բայց յետոյ կրկին ետ ստացար», Թուրքը իւր տեղը գնալու ժամանակ (քաղաքացի չէ լինում) Ճանապարհին մեռնում է, իսկ պարսկի ոսկիները պահած մնում են խանութի պատի մէջ։ Պարսիկն էլ չուտով մեռնում է։ Այդպիսով ոսկիները մնում են այնտեղ, որտեղ և գտնուեցան այժմ։

—

Քաղաքային ջրմուղի շինութեան վրայ, ինչպէս երևում է հաշուից, գործադրուել է 750,822 ր. 16 կ., որից միայն 19,250 րուբլին մնում է անվճար։ Քաղաքային վարչութիւնը կազմելով մանրամասն հաշիւ այս մասին, հաշուի մէջ ցոյց է տալիս, որ ներկայ նախագծով շինուած ջրմուղը մօտ 100,000 րուբլի էժան նստեց քաղաքին, քան ինչ որ կինստէր առաջուայ նախագծով։

—

ՇՈՒՇԻԻՑ.—Քաղաքիս հասարակութեան կողմից ընտրուեցան պատգամաւորներ՝ էջմիածնում մեր ներքին մի քանի խնդիրների մասին խնդրամատոյց լինելու համար։

Ասում են, որ առաջիկայ ուսումնական տարում մեծ փոփոխութիւններ են լինելու մեր ուսումնարանների վարչական և ուսուցչական կազմութեան մէջ։ Այժմեան տեսուչը Թողնում է իւր պաշտօնը և գնում Բեսարաբիա քահանայ ձեռնադրուելու։

—

ԲԱԳՈՒԻՑ. — Վերջին ժամանակներս պ. Շահգիդանեանի գործարանի մասին լուրեր էին տարածվում ժողովրդի մէջ. ոմանք ասում էին, Թէ գործարանը ծախվում է, իսկ ոմանք էլ՝ Թէ կապալով է տրվում։ Յունիսի 6-ին Շահգիդանեանը իւր գործարանը տուեց կապալով մօսկվաբնակ Հարուստ Հրէայ Գուստաւ Լիստին՝ տասը տարի ժամանակով, տարեկան 33,000 րուբլիով։ Յաւալի է, որ պարոն Շահգիդանեանի գործարանը, որ առաջինն կարելի է համարել Կովկասում, այսօր Հայի ձեռքից անցում է Հրէայի ձեռքը։ Մինչև այժմ երբ մի Հայ արհեստաւոր, կամ նոր արհեստ սովորող էր լինում, բոլորն էլ վազում էին պ. Շահգիդանեանի գործարանը տեղ գտնում։ Տեսնենք այժմ որտեղ պէտք է վազեն Հայ արհեստաւորները։ Պէտք է այս էլ նկատել, որ պ. Շահգիդանեանի ժամանակ գործարանում աշխատում էին օրական 10 ժամ, իսկ յունիսի 6-ից, Գուստաւ Լիստի գալուց յետոյ, 10-ի փոխարէն աշխատում են $10\frac{1}{2}$ ժամ, ինչպէս լսում ենք, պ. Շահգիդանեանը մտադիր է ծախելու իւր նաւթագործարանը։

—

Անդրկովկասեան օստիկանական նոր կազմակերպուած բաժանումներն արդէն, տեղական ռուս Թերթերի ասելով, հաստատուած է և պիտի գործադրուի յուլիսի 1-ից։ Այդ նոր բաժանումներով օստիկանական պաշտօնեաների ռոճիկները նշանաւոր չափով աւելացրած են. այսպէս օր. գաւառապետները ստանալու են 2600 ր., իսկ պրիստաւներն աւելի քան 1000 րուբլի։

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են.—Հազիւ հազ դադարեցան անձրևները. մէկ շաբաթ կայ ինչ որ շատ տաքեր են լինում։ Կուբանը իւր ափերից դուրս գալով տարածուեցաւ այնպիսի տեղեր, որոնք անմատչելի էին կարծվում, սակայն նշանաւորը վնաս չպատճառեց, միայն մէկ փայտեայ լողարան փախցրեց և մի ծխախոտի տնկարան ողողեց, մաքրեց՝ աշխատութեան հետքն անգամ չթողնելով։ Անձրևները մասամբ վնասեցին արտերին և այն՝ տեղ-տեղ, այնու ամենայնիւ ամեն բանի առատութիւն է։ Առատ են մանաւանդ մոծակները իրենն անվերջ երաժշտական լսմբերով և անտանելի փոշին։

—

Այս տարուայ մայիս ամսուայ քննութեան Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցում և նրա Հաւելարարի և Խարփուխի մասնաճիւղերում եղած հիւանդանոցների մէջ եղել են 699 հոգի տղամարդ, 648 Հ. կին, 355 Հ. տղայ. դրանցից 465 հոգի վարձով և 1237 Հ. էլ ձրիարար։ Իսկ անցեալ 1887 Թ. մայիսին եղել են 824 Հ. տղամարդ, 681 Հ. կին, 420 Հ. տղայ. դրանցից ձրիարար բժշկուել են 1300 հոգի, իսկ վարձով —625 հոգի։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Մայիսի 22-ին, կիրակի պատարագից յետոյ, քաղաքիս Սուրբ Գէորգ եկեղեցում կատարուեց տաղանդաւոր Թաֆֆիի հոգեհանգիստը։ Տեղիս երկսեռ դպրոցների ուսուցիչ պ. Սիսակ Օհանեանցը կարդաց մի սրտառուչ Ճառ, որով պատմեց Թաֆֆիի կենսագրութիւնը. եկեղեցին լի էր բազմութեամբ։

—Ձեզնո՞վ հիմնեցուիմ-Ճարպուի ղեկավարեալ ընտանեաց ձերոց ընդհանրապէս, եւ մանաւանդ ի Հայկական գաղթականութեան Ամերիկայի, որ ի Մուշ եւ ի շրջակայս իւր ունէր ընդարձակ գործունէութիւն, եւ ի ներքուստ ի ներքին կեանս ազգին ներգործութիւն։ Ես ինքս ի Մուշ ծնեալ եմ եւ մեծացեալ, եւ ի մանկութենէ իմմէ ի Մուշ ունէի ծանօթութիւն ընդհանրական ազգին, եւ մանաւանդ ընտանեաց ձերոց, որոնք ի Մուշ ունէին մեծ համբաւ եւ պատիւ։ Ուրախ եմ, որ ձեզ կը գտնեմ ի Պոլիս, եւ կրնամ ձեզմէ ստանալ տեղեկութիւններ ճշմարիտ եւ ստոյգ։

Նախ եւ առաջ կը խնդրեմ ձեզմէ, որ ինծի պատմէք ձեր անձնական կեանքին վրայ, եւ ձեր ընտանեաց։

I

Ես ծնայ ի Մուշ ի 1838 թուականին։ Հայրս Տէր-Յովհաննէս Ճարպուի էր, եւ մայրս՝ Տիրուհի Տէր-Գրիգորեան։ Ես ունիմ երկու եղբայրներ եւ երեք քոյրեր։ Ամենամեծ եղբայրս Գրիգոր Ճարպուի է, որ ներկայիս Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքին մէջ կը բնակի։ Միւս եղբայրս Յովհաննէս Ճարպուի է, որ ներկայիս Պոլիս կը գտնուի։ Ես ալ Պոլիս եկած եմ 1887 թուականին։

Ձեր ուսումնական կեանքին վրայ։

Ուսումնական կեանքս սկսած եմ ի Մուշ, ի հայկական դպրոցի մը մէջ, ուր կարդացած եմ մինչեւ 5-րդ դասարանը։ Ապա ի Պոլիս եկած եմ, եւ ուսանած եմ Գալաթիոյ Ամերիկեան վարժարանին մէջ, ուր կարդացած եմ մինչեւ 3-րդ դասարանը։ Ապա ի Մուշ դարձած եմ, եւ ուսանած եմ ի Մուշ ի Ամերիկեան վարժարանին մէջ, ուր կարդացած եմ մինչեւ 5-րդ դասարանը։ Ապա ի Պոլիս եկած եմ, եւ ուսանած եմ ի

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊՈՂՈՍԵԱՆ ԵՒ ՈՐԴՈՑ

ՏՊԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՍՑԷ ԱՌ ՀԱՍՑԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊՈՂՈՍԵԱՆ ԵՒ ՈՐԴՈՑ

ՏՊԱՐԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՀԱՍՑԷ ԱՌ ՀԱՍՑԷ

ւորող ժողովրդի ողջույնները ուղղմածաբար, բայց լրջօրէն։

ԲԵՐԼԻՆ, 14 յունիսի.—Վիլհելմ կայսրը հանդիսաւոր կերպով բացեց կայսերական պալատի Սպիտակ դահլիճում գերմանական Ռայխստագը։ Երբ կայսրը մտաւ դահլիճ, նրա մի կողմից գնում էին Սակսոնիայի թագաւորը, միւս կողմից Բավարիայի պրինց-խնամակալը, գերմանական միւս դաշնակից թագաւորների ուղեկցութեամբ։ Գահական ճառը կարդալով, կայսրը սեղմեց իշ. Բիսմարկի ձեռը, որ ի պատասխան՝ համբուրեց կայսրի ձեռը։ Բավարիայի մինիստր-նախագահ Զուտցը, որ կանգնած էր իշ. Բիսմարկի կողքին, բացականչեց «gocg» ի պատիւ կայսրին՝ երբ նա դուրս էր գալիս։ Կայսրուհին և թագաժառանգը ներկայ էին Ռայխստագի բացման միջոցին՝ գահի կողքին նստած։ Գահական ճառի մէջ կայսրը լիշելով իւր ծնողի վշտալի մահը, յայտարարեց, որ որպէս կայսր և թագաւոր, նա վճռել է գնալու իւր պապի հետքով, որ վաստակել է ազգի սէրն և թագաւորների երախտագիտութիւնը և խոստացաւ պահպանել կայսերական սահմանադրութիւնն բոլոր ապահովութիւններով և ժողովրդական իրաւունքներով, շարունակել իւր պապի կայսերական օրէնսդրութիւնը, մանաւանդ ձգտել բանուորներին ապահովելու և դրանով հասնել վատառողջ հակասութիւնների խաղաղացման, պահպանել պետական և հասարակական զարգացումը օրինականութեան սահմաններում և հաստատամտութեամբ ընդհմադրել կարգ խանգարելու բոլոր ձգտումներին։ «Արտաքին քաղաքականութեան մէջ, ասաց կայսրը, ես կամենում եմ խաղաղութեամբ ապրել ամենքի հետ, դեպի բանակն ունեցած սէրը և իմ յարաբերութիւնները նրա հետ, երբէք չեն գրաւիլ ինձ՝ խաղաղութեան բարիքներն մթագնելու համար, եթէ միայն չեն յարձակիլ մեզ և մեր դաշնակիցների վրայ։ Բանակը պէտք է ապահովէ մեզ խաղաղութիւնը, իսկ եթէ դա խանգարուի, նա կարող պիտի լինի կրկին պատուով ետ խլելու նրան. Աստուածային օգնականութեամբ բանակը կը կարողանայ այդ անել՝ աչքի առաջ ունենալով այն ոյժը, որ նա ձեռք բերեց վերջերքս հրատարակուած զինուորական օրէնսդրութեամբ։ Իմ սիրտը շատ հեռու է յարձակողական պատերազմների համար այդ ոյժից օգտուելուց. Գերմանիան ոչ պատերազմական նոր յաղթանակների կարիք ունի և ոչ ել ո և է աշխարհակալական նպատակների, նրանից յետոյ, երբ նա պատերազմով ձեռք բերեց անկախ և միացած ազգ լինելու վերջնական իրաւունքը։ Մեր դաշնակցութիւնն Աւստրիա-Ունգարիայի հետ յայտնի և հրատարակուած բան է. ես հաւատարիմ եմ մնում նրան գերմանական հաւատարմութեամբ ոչ միայն նրա համար, որ ես այս պաշտպանողական դաշնակցութեան մէջ տեսնում եմ Եւրոպայի հաւասարակշռութեան հիմքը, այլ և գերմանական պատմութեան պատուիրանք, որի բովանդակութիւնն այժմ հաստատում է գերմանական ամբողջ ազգի հասարակական կարծիքով և որը համապատասխանում է հին եւրոպական միջազգային իրաւունքին, որը մինչև 1866 թիւը անվիճելի կերպով գործում էր։ Նոյնպիսի պատմական յարաբերութիւններ, նոյնպիսի ազգային կարիքներ մեզ միացնում են Իտալիայի հետ. երկու պետութիւններն էլ ցանկանում են պահպանել խաղաղութեան բարիքները, որպէս զի հաստատեն մօտերքս ձեռք բերած միութիւնը, զարգացնեն ազգային հաստատութիւնները և օժանդակեն իրենց առաջադիմութեան։ Մեր ունեցած համաձայնութիւնները Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի հետ, շատ գոհ եմ, որ թոյլ կը տան ինձ պահպանել իմ անձնական բարեկամութիւնս Ռուսաց Կայսրի հետ և արդէն հարիւր տարուց ի վեր հարևան ռուս կառավարութեան հետ ունեցած խաղաղ յարաբերութիւններս, որ համապատասխան է ինչպէս իմ անձնական զգացումներիս, նոյնպէս և Գերմանիայի շահերին։ Խաղաղութեան բարեխղճօրէն պահպանելուն նպաստելու գործում ես նոյն պատրաստակամութեամբ մտնում եմ հարբենիքիս ծառայութեան, ինչպիսի պատրաստակամութեամբ ստանձնում եմ բանակի հոգածութիւնը, միևնոյն ժամանակ ուրախանալով մեր ունեցած աւանդական յարաբերութեան վրայ ուրիշ պետութիւնների հետ, որովհետև այդ յարաբերութիւններն նպաստեցին լիշած առաջին ուղղութեամբ առաջ ընթանալու ձգտումներին։ Յուսալով Աստուծուն, և հաւատալով ժողովրդի ոյժերին, ես հաւատացած եմ, որ մեզ անսահման երկար ժամանակ տրուած կը լինի պահպանելու և կատարելագործելու այն, ինչ որ պատերազմով առնուած է իմ երկու նախորդների կառավարութեան տակ»։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԳԱՂԱՓԱՆՆԵՐ

—

ԷՋՄԻԱԾԻՆ. «Արարատի» յարգելի խմբագրութեան. Ապրել ամսի «Արարատի» համարը խմբագրութիւնս չէը ստացել. այդ մասին ձեզ տեղեկացնելով, չնորհակալ ենք, ստացանք այդ համարը։ Մայիսի «Արարատի» համարը նոյնպէս չենք ստացել մինչև օրս. չգիտենք թէ խմբագրութիւնը մոռացմամբ չէ ուղարկել խմբագրութեանս, թէ՞ Ճանապարհին կամ մի որ ևէ տեղ անհետացել է։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. տ. Ե. Շ-ին։ Ձեր գրութեան համաձայն խմբագրութիւնս սկսեց ուղարկել «Նոր-Դար»-ը էսենտուկ Ձեր անուան. խնդրում ենք յայտնէք Ձեր հասցէի մանրամասնութիւնը, որպէս զի համարները չը կորչեն կամ պօստային վարչութեան մէջ չմնան։

Խմբագիր-հրատարակիչ

ՍԳԱՆԴԱՐ ՍԳԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԴ

Որովհետև այս տարի աշնանը և ձմրանը պիտի հրատարակուին «ԵՐԱԽԱՅՐԻՔ»-ի երրորդ և չորրորդ գրքերն, ուստի յայտնում եմ այն յարգելի անձերին, որոնք բաժանորդ են գրուել «ԵՐԱԽԱՅՐԻՔ»-ին, յայտնեն իրենց Նոր հասցէն՝ եթէ մի գիւղից կամ քաղաքից տեղափոխուել են։ Իմ հասցէն. *Шулаверъ* (Черезъ Бѣлый-Ключъ) *Аршаку Меграбяну*.

Արշակ Մեհրաբեան

(Ս.) 5—3

!!ԶԳՈՒՇԱՑԵՔ ԿԵՂՏԻՒԻՑ ԵԻ ՆՄԱՆՈՒԹԻՒՆԻՑ!!

Պրովիզօր Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ

ՕՃԱՌ

Գլխի թեփուկ ոչնչացնելու համար։ Նպաստում է մազի կանոնաւոր աճման և դադարեցնում է նրանց թափուելը։

Շշուկի գինն է 30 կ. երկու շշուկը 50 կ.

Վաճառվում է—Թիֆլիսում՝ դեղատնային ապրանքների վաճառականութեան Կովկասեան Ընկերութեան մօտ, Ա. Ս. Յուրինովի մօտ և Գր. Անդ. Պապովի մօտ։

Բէշտում՝ Խահակ Մելիք Յովսէփեանցի մօտ։

Բագուում՝ Բէկկէրի մօտ։

Պահեստը՝ Մոսկվա, Մաշկով պերեուլօկ, տ. Միրկուլովի։

!!Ա. Մ. ՕՍՏՐՕՈՒՄՕՎԻ ՕՃԱՌՐ ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՄԻԱՑՆ!!

(Մ. 42354) 10—2

Մարմնի մասերի, մանաւանդ ոտի մատների փտուկի դէմ

ԳԱՅԼՄԱՆԻՆԸ

Ծախվում է դեղատներում, նոյնպէս և դեղավաճառների մօտ Եւրոպայի նշանաւոր և Ռուսիայի բոլոր քաղաքներում։ Գլխաւոր դէպօն գտնվում է Վարշավայում՝ հնարողի մօտ, դեղատնատիրոջ, ֆարմացեւտի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ մօտ, Էլէքտօրալնայա փողոց, № 39։ Մեծ տուփով Գայլմանինը վաճառվում արժէ 50 կոպէկ, փոքրը 30 կոպէկ։

ՊԷՏՔ Է ԽՈՑՍ ՏԱԼ ԿԵՂՏԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր տուփի վերայ գտնուի գործադրութեան բացատրութիւնն ու Պարիզի ցուցահանդէսի մեդալները։

(Մ. 40,700) 10—6

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Եղեռնաւոյն Երեւելութիւն Բաթումի Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթի ներ. — կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մօտնում է Սուխումի և Նովոռոսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթի ներ.—կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռոսսիյսկի և կերչի վրայով։

Շաբաթ երեք.—երեկոյեան 8 ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթի ներ.—երեկոյեան արտասահմանեան գնացքով կ. Պոլիս։

Բաթումի գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ կերչի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, կերչի և Նովոռոսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի երեք.—Առաւօտը կ. Պոլսից։

Յանօթ.—Ուղիղ գծով ընթացքը այն նաւերը, որոնք վերադառնում են կերչի և Նովոռոսսիյսկի վրայով, Նովոռոսսիյսկից պիտի դուրս գան երեկոյեան ժամը 9-ին, Նովոռոսսիյսկեան երկաթուղու գնացքին յարմարելու համար։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթի ներ. — Առաւօտեան ժամը 9-ին, Զլոմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին մեանալու, որ մտնում է և Սուխում։

Ուրբաթ—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Զլոմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Զլոմ-Կովկասեան և Բումբլևա-Անատօլեան շրջանառու շոգենաւերին մեանալու։

Բաթումից գնում է Փոթի

Շաբաթ շաբաթի և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Զլոմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փոթի որոշեալ ժամանակներում երեւելեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր շաբաթ շաբաթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթի առաւօտները։ Նիկոլաեվից Օդեսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստոպոլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փոթի գալիս են ուրբաթի լուսաբացին և հեռանում է շաբաթի օրը երեկոյեան, վերադառնում է առանց Բաթում մտնելու Սեվաստոպոլի և Օդեսայի վրայով գալիս է շաբաթի երեկոյեան։

—

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երեւելութիւնը պատերազմական-վերսկական Ճանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը։

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կաժէտը առաւօտեան ժամը 9-ին, Մէջթի կայարանում պիղերելով. հասնում է Վլադիկավկազ միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, պիղերում է Գուդաուր կայարանում և Վլադիկավկազ հասնելով միւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց պիղերելու, միւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 3-ին և առանց Ճանապարհին պիղերելու Վլադիկավկազ հասնում է միւս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կաբէտները դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, պիղերում են Մէջթի կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և պիղերելով Պատանաւր կայարանում, միւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկուայ ժամը 4-ին Ճաշից յետոյ, առանց պիղերելու՝ միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին պիղերելու, միւս օրը հասնում են Թիֆլիս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

երեւելութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մաբ. գն. 3 ժ. 21 վ. ց.
Աղստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մաբդ. 8 ժ. 24 վ. առ.
Աղստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երեւելութիւն Մարսէլլի և Բաթումի մէջ։

Հինգշաբթի, յունիսի 23-ին, «ԱՐՄԷՆԻԱ» (Arménie) շոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ (Garrigues) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պոլիս և Մարսէլլ։

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ԲԻՆՕՒԻՆ նախկին գալերէյա Աբծրուենների № 103. 4—3

Խ Ա Ր Կ Ո Վ

ՐՈՒՖԻ

ՀԻՒՐԱՆՈՑ

(Մ. 18742)

ՐԸՐՆԱՑԱ ԵՒ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏՍԿԱՑԱ ՓՈՂՈՑՆԵՒ ԱՆԿԱՆԸ

Սենեակները 75 կ. մինչև 5 ր., բոլոր յարմարութիւններով՝ կառքը գնացքների մօտ՝ մէկ հոգու համար 30 կ., երկուսի համար 40 կ. հաշուելով և բեռը։ Առաջնակարգ Ճաշարան. նախաճաշը 30 կ., Ճաշը 60 կ. մինչև 2 ր., քնելիքը՝ 40 կոպէկ։ Օրընակելի գինու պահեստ։

☛ 10 օրից աւելի մնացողին զիջում։

Խնդրվում է հասցէն լսել 13—8

ՋԻՑԹՈՒՆՑԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Ցարճախումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քրդի եղանակ.
8) Նախիջևանի ջրկիրների եղանակ.
9) Իջաս պարսկական.
10) Պարսկական եղանակ.
11) Մօլդավական պար.

Գինն է 1 րուբլի. Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ
для фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
5) Армянскій мотивъ.
6) Тифлисская зурна.
7) Курдынскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).

Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(*խմ.*) X—35

MOTIFS ORIENTEAUX
Pour le Piano

Дозволено цензурою. Тифлисъ, 14-го Іюня 1888 г.

Տպարան Լ. Գ. Կրամարէնկօլի

Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Чихахова